

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՄԵՍՏ ՍԵՐԺԻԿԻ ԹԱՄՐԱԶՅԱՆ

**ՆՄԱՆԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՓՈՒԼ**

**Ժ. 02.02. «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գ.Ռ. Հովհաննիսյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Լ.Գ. Բրուտյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ա.Ս. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012թ. դեկտեմբերի 17-ին՝ ժամը 15.00-ին,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0015, Երևան, Գր. Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2012թ. նոյեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ

Ն.Մ. Սիմոնյան

ԱՆԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Լեզվի ծագման հիմնախնդիրը արդի շրջանում կապում են ճանաչողության հարցի հետ: Գոյություն ունեցող վարկածները փորձում են նկարագրել նաև այն մեխանիզմները, որոնք ապահովում են լեզվի և գիտակցության կապը:

Լեզվաբանությունն իր զարգացման արդի փուլում կարիք ունի զուգահեռելու նորագույն վարկածներն ու փորձառական տվյալները, վերանայելու լեզվի ծագման մասին եղած հայեցակետերը:

Ատենախոսության նորույթը պայմանավորված է պաշտպանության հանված այն վարկածով, որ նմանակումը լեզվի ծագման առաջնային փուլն է: Այս մասին զեկույցով հանդես ենք եկել նաև ճանաչողական լեզվաբանության ամենահեղինակավոր գիտաժողովներից մեկում, դեռ մեր ուսումնասիրությունն սկսելու ժամանակ, և այնտեղ ծավալված քննարկումը մեզ դրդեց զարգացնելու ներկայացված գաղափարները: Լեզվի ծագման կամ յուրացման մասին որևէ տեսություն *չի մատնանշում նմանակումը որպես լեզվական ճանաչողության առաջնային գործընթաց, համակողմանի հիմնավորումներ այս կապակցությամբ չկան:*

Մյուս նորույթը կապված է **ուսումնասիրության օբյեկտի** քննության՝ մեր ընտրած մոտեցման հետ: Մենք կարծում ենք, որ մարդու կողմից լեզվի՝ կենսական կարևորություն ունեցող այդ գործիքի յուրացման և կիրառության մեջ ժամանակային երկու (ֆիլոգենետիկ և օնտոգենետիկ) չափումներում էլ տեղի են ունենում սկզբունքորեն նման կամ նույնական հոգեբանական-նշանային և ճանաչողական գործընթացներ, և մեկ ճանաչողական գործառույթի՝ նմանակման ուսումնասիրությունը տարբեր չափումներում հիմք է դառնում ճանաչողության առավել բարդ փուլերում նմանակման, ապա համաբանության սկզբունքի բացահայտման համար:

Ատենախոսության հայեցակարգային և մեթոդաբանական հիմքերը:

Քսաներորդ դարում ձևավորված մի քանի տեսություններ՝ Պ. Բրոկայի, Կ. Վեռնիկեի, Բ. Սքինների, Ն. Խոմսկու, Դ. Էլկոնինի, Ջ. Շումանի, Հ. Դամասիոյի, Լ. Վիգոտսկու, Հ. Բրաունի, Վ. Վունդտի, Վ. Սկալիչկայի, Գ. Ջահուկյանի, Դ. Բիքերթոնի, Ժ. Պիաժեի, Ա. Կատանիայի, Բ. Բիչախյանի և ուրիշների աշխատությունները շրջադարձային նշանակություն ունեցան մտածողության և խոսքի՝ իբրև առարկայական և նշանային գործունեության մասին եղած պատկերացումների զարգացման համար:

Ատենախոսության մեջ լեզվի մեր ըմբռնումը սերված է, բայցև որոշակիորեն տարբերվում է այս տեսություններից. այն, մեր պատկերացմամբ, հաղորդակցման և ճանաչողության գործիքից բացի, ներկայանում է որպես գործունեության ինքնազարգացող և զարգացնող համակարգ, կարգայնացնող-մտածական ունակություն:

Հոգելեզվաբանությունը այս ոլորտում կիրառում է հիմնականում լեզվաբանական այնպիսի **մեթոդներ**, ինչպիսիք են նկարագրական, կառուցվածքային, համակարգային, զուգորդային մոտեցումը, մակածման, արտածման, համաբանության և լրացման համագիտական սկզբունքները:

Ատենախոսության կանխավարկածը. բնական լեզվի մի կողմից՝ պատմական ծագման և օնտոգենետիկ յուրացման նախնական փուլն իրականանում է նմանակման միջոցով: Առաջին դեպքում նախամարդու առաջին խոսքային գործունեության պատճառ են դարձել բնական երևույթները՝ ձայները, շարժումները և դրանց հարուցած զգայությունները, իսկ օնտոգենետիկ երեխայի կողմից լեզվի յուրացման առաջին քայլն է բնական և սոցիալական միջավայրի՝ հոգեբանական առումով նշանային հանդիսացող երևույթների նմանակումը:

Ատենախոսության նպատակը: Հետազոտության նպատակն է այս վարկածի հոգելեզվաբանական հիմնավորումը, այն է՝ բնական լեզվի գործառնության առաջնային փուլում նմանակման շարժառիթների բացահայտումը, հնչյունանմանակման ճանաչողական և լեզվատեղծ դերի սահմանումը, դրա՝ լեզվունակության ավելի բարդ մակարդակներում առկայանալու սկզբունքի բացահայտումը:

Ֆիլոգենետիկում նմանակման սկզբունքն իրականանում է նախ և առաջ բնաձայնական բառերում և հետագոտելի է միջլեզվական համեմատության միջոցով: Օնտոգենետիկում նմանակումն առարկայանում է երեխայի կողմից առաջին հնչյունների, վանկերի, ձևային նշանակությունների և ավելի բարդ բառաքերականական ու խոսքային այլ դրսևորումներում: Մեթոդապես այստեղ կիրառելի են թե՛ առաջին և թե՛ երկրորդ լեզվի յուրացման փաստական տվյալները:

Ատենախոսության խնդիրները.

- համեմատական վերլուծման ենթարկել լեզվի ծագման և յուրացման տեսությունները.
- հստակեցնել լեզվական ունակության իրացման շարժառիթները և փուլերը. դիտարկել նմանակման հոգեբանաստական, ճանաչողական և

լեզվաստեղծ գործառնությունները անգլերենի և հայերենի օնտոգենեզում և ֆիլոգենեզում:

Ատենախոսության առարկան և լեզվանյութը: Ուսումնասիրության առարկան նմանակման լեզվական ֆիլոգենետիկ և օնտոգենետիկ դրսևորումներն են՝ բնածայնական բառերն ու հնչյաղապարները՝ անգլերեն, հայերեն և այլ լեզուներից վերցված ավելի քան 1000 լեզվախոսքային նմուշներ և օրինակներ, որոնց մի մասը բերված է ատենախոսության տեքստում: Օնտոգենեզում նմանակումը դիտարկել ենք մանկան խոսքի օրինակներով՝ վերցված երկարաժամկետ քանակական գիտափորձեր նկարագրող գրականությունից և 12-48 ամսական երեխաների խոսքի՝ մեր երկարաժամկետ դիտարկումներից՝ կատարված 2003-2009 թթ:

Ատենախոսության տեսական արժեքը պայմանավորված է լեզվի ծագման և յուրացման լեզվաբանական, հոգեբանական և ճանաչողական տեսությունների վերլուծական զուգահեռման փորձով: Վեր է հանվում նմանակման լեզվաճանաչողական կայուն գործառնությունը լեզվի զարգացման և յուրացման տարբեր մակարդակներում:

Ատենախոսության գործնական նշանակությունը կարող է չափվել ընդհանուր լեզվաբանության և հոգեբանության, լեզվի յուրացման տեսություններին նվիրված դասընթացներում մեր ուսումնասիրության տվյալների և արդյունքների օգտագործման կատարված փորձերով, ինչպես նաև մանկան առաջին լեզվի յուրացման և օտար լեզվի ուսումնասիրման կիրառական մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ բացվող հնարավորություններով:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից:

ԱՌԱՋԻՆ ՉԼՈՒՄ ՆՄԱՆԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՆԴԻՐԸ ԼԵՉՎԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ըստ Կատանիայի՝ լեզվի ծագման և զարգացման տեսությունները պետք է հաշվի առնեն բնական ընտրության երեք տարբեր կտրվածքներ՝

առաջինը՝ ֆիլոգենետիկ, երկրորդը՝ օնտոգենետիկ և երրորդը՝ մշակութային ընտրություն:

Ֆիլոգենետիկ ընտրությունը ասելով՝ Կատանիան նկատի ունի լեզվի համար անհրաժեշտ հատկությունների և կարողությունների պատմական ձեռքբերումն ու ամրագրումը մարդկային ԴՆԹ-ում: Ֆիլոգենետիկ ընտրության արդյունքում մարդը զինվեց լեզվի համար անհրաժեշտ բոլոր բնախոսական գործոններով:

Օնտոգենետիկ ընտրությունը վերաբերում է կյանքի ընթացքում անհատի կողմից վարքագծի՝ գիտակցված կամ չգիտակցված կերպով կատարած լավագույն տարբերակների ընտրությանը: Օնտոգենետիկ ընտրության դեպքում մեծ նշանակություն ունի հաղորդակցումը:

Մշակութային ընտրությունը վերաբերում է սերնդեսերունդ փոխանցվող ունակություններին և գիտելիքին: Այս տիպի ընտրությունն իր մեջ ներառում է սովորել-սովորեցնելը, նմանակումը: Օնտոգենետիկ ընտրությունը իրականանում է մշակութային ընտրության շրջանակներում՝ որպես յուրաքանչյուր անհատին տրված ընտրության հնարավորություն: այն մի կողմից զարգացնում է տվյալ միջավայրը, մյուս կողմից՝ պահպանում է մշակույթի տեսակը որպես այդպիսին:

Այս հարաբերակցությունները պարզելը կօգնի հասկանալ նմանակման ճանաչողական գործառնության երեք տարբեր չափումներում իրականանալու առանձնահատկությունները: Ֆիլոգենետիկ նմանակումը բնության ձայների ուղղակի, ինքնաբերական արտացոլումն է մարդու ձայնարանի միջոցով: Դրա արդյունքն են բնածայնական բառերը՝ օնոմատոպները և ձայնարկությունները: Օնտոգենետիկ նմանակումը անհատից անհատ փոխանցվող գիտելիք-գործողությունն է, որի տարբերակվածությունը կախված է նմանակողի ֆիզիկական հնարավորություններից. երեխան նմանակում է ծնողի խոսքը իր ձայնարանի տված հնարավորությունների չափով:

Լեզվի ծագման և յուրացման տեսությունները: Ուղեղում Բրոկայի և Վեռնիկեի հատվածների հետ կատարված փոփոխությունները և որոշ մշակութային գործոններ հիմք են հանդիսանում ենթադրելու, որ մարդն ի վիճակի էր արտաբերել «բառեր»¹ դեռևս 300 000 տարի առաջ:

¹ Tobias, P.V., The Emergence of Spoken Language in Hominid Evolution, Bonn, Habelt, 1991, p.126:

Լարինգոլոգներն այն կարծիքին են, որ խոսքը հնարավոր է եղել միայն այն ժամանակ, երբ քիմքն իջել է մինչև այն մակարդակը, որ գրավում է այժմ: Ցածր քիմքը տիպիկ է միայն մարդուն: Բայց ինչպես նշում է Բ. Բիչակյանը, «այս նույն փաստը կարող է հանդիսանալ ապացույցն այն դրույթի, որ լեզվական կարողությունների և լեզվի զարգացումը մի կողմից և քիմքի իջեցումը մյուս կողմից գտնվում են ուղիղ համեմատական կապի մեջ»²: Բ. Բիչակյանը լեզվի զարգացումը բացատրում է Դարվինի առավելությունների ընտրության սկզբունքով:

Ն. Խոմսկին գտնում է, որ լեզուն ներքին բնույթ ունի, այն ծածկագրված է մարդկային ԴՆԹ-ի մեջ և փոխանցվում է սերնդեսերունդ: Ս. Փինքերը նշում է, որ «լեզուն մեր ուղեղի կենսաբանական կառույցի մի մասն է, կենսաբանական բնագրի արդյունք է»³: Նա կարծում է, որ լեզուն «մշակութային նորարարություն» չէ, դա պարզապես լեզվական բնագրի արդյունք է:

Լեզվի օնտոգենետիկ յուրացման տեսությունները կարելի է բաժանել երկու խմբի: Տեսությունների մի մասը շեշտը դնում է փորձի, շրջակա միջավայրի հետ փոխազդեցության, լեզվական և ոչ լեզվական իրականությունների երկկողմանի կապի կարևորության վրա: Էմպիրիզմի կողմնակիցները կարծում են, որ ցանկացած գիտելիք ձեռք է բերվում փորձի միջոցով: Բայց և այնպես ամբողջությամբ չի ժխտվում բնածին գործոնների կարևորությունը:

Տեսությունների քննությունից կարող ենք անել հետևյալ ընդհանրացումները. առաջին՝ երեխան սկսում է յուրացնել իր մայրենի լեզուն սոցիալականացման ընթացքում, երկրորդ՝ մայրենի լեզուն ձևավորվում և զարգանում է միջավայրի շնորհիվ: Երրորդ՝ լեզվի բնախոսության ձևավորումը կախված չէ արտաքին ազդակներից, չնայած անհրաժեշտ է, որպեսզի երեխան լսի կենդանի խոսքը: Չորրորդ՝ ուսուցումն ու փորձը քիչ նշանակություն ունեն առաջին լեզվի ձևավորման համար: Հինգերորդ՝ լեզվի յուրացումն ունի օրինաչափ փուլեր՝ անկախ սեռից, ազգությունից, ֆիզիկական կարողություններից, յուրացվող լեզվից: Եվ վեցերորդ՝ լեզվի

² Laitman, J. T., Reidenberg, J. S. & Gannon, P. J. (1992) in Language Origin: A Multidisciplinary Approach, eds. Wind, J., Chiarelli, B., Bichakjian, B. & Nocentini, A. (Kluwer, Dordrecht, The Netherlands), pp. 385-397., Lieberman P., Eve Spoke. Human Language and Human Evolution, New York, W.W. Norton, 1998, p 115:

³ Pinker S., The Language Instinct, Morrow, 1994, p. 525:

յուրացման համար կա մի տարիք, որը լավագույնն է լեզվի յուրացման համար, և դրանից հետո լեզվի յուրացումը նվազագույն արդյունավետություն ունի և զրեթե անհնար է:

Գիտական աղբյուրներում նշվում է լեզվի յուրացման երկու լավագույն տարիքային փուլ: Առաջինը տևում է մինչև երկու տարեկանը: Եթե երեխան մինչև երկու տարեկան չի լսում մարդկային խոսք, նա չի կարող լիովին տիրապետել որևէ լեզվի: Երկրորդ ժամանակահատվածը վերաբերում է երկրորդ լեզվի յուրացմանը, որի լավագույն ժամանակը նախորդում է սեռական հասունացմանը: Դրանից հետո համարվում է, որ օրգանիզմն արդեն ձեռք է բերել կենսականորեն կարևոր բոլոր գործառնությունները, այդ թվում՝ վերարտադրման և հաղորդակցման, այսինքն՝ լեզվի գործառնությունը:

Ժ. Պիաժեի ճանաչողական հոգեբանության համաձայն ճանաչողական կառույցները նախորդում են լեզվական ձևերի յուրացմանը:

Ըստ Լ. Վիգոտսկու՝ հաղորդակցումն էական է գիտակցության ձևավորման համար: Լ. Վիգոտսկին համոզված է, որ զարգացումը հնարավոր է միայն սոցիալական միջավայրի հետ հաղորդակցության դեպքում, և որ ուսուցման գործընթացին զուգահեռ է ձևավորվում գիտակցությունը: Այս երևույթը նա անվանում է «Զարգացման մերձակա տարածք»:

Լեզվի ծագման և յուրացման շարժառիթները: Լեզվի յուրացման մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հարկավոր է անդրադառնալ այն դրդապատճառներին, շարժառիթներին, որոնք ստիպում են երեխային յուրացնել իր մայրենի լեզուն, իսկ հասուն անհատին՝ սովորել մեկ այլ լեզու:

Ըստ Ա. Կատանիայի՝ լեզուն չէր կարող առաջացած լինել միայն որպես հաղորդակցության միջոց: Շատ կենդանիներ, օրինակ՝ կապիկները, հաջողությամբ արտահայտում են իրենց հույզերը (վախ, զայրույթ, հաճույք), և նրանք լեզվի կարիք չունեն: Եվ համաձայն էվոլյուցիայի տեսության՝ նոր համակարգ չի ստեղծվում, եթե հինը հաջողությամբ կատարում է իր բոլոր գործառնությունները:

Համաձայն Դ. Էլկոնինի «Մարդկային հոգու էվոլյուցիայի տեսության»՝ լեզու ստեղծելու և սովորելու համար անհրաժեշտ են երկակի զուգահեռ պահանջումը՝ կապիկների և ճանաչողական-ինտելեկտուալ շարժառիթներ⁴: Զ. Շումանը խոսում է ժառանգաբար փոխանցվող շարժառիթների երկու

⁴ Эльконин Д. Б., Развитие речи в дошкольном возрасте. М., 1958, стр. 554:

համակարգերի մասին⁵: Դրանք հոմեոստատիկ և սոցիոստատիկ կարգավորումներն են:

Մենք կարծում ենք, որ Դ. Էլկոնինի պահանջումնքային շարժառիթի գաղափարը որոշ բացառություններով համընկնում է Ջ. Շումանի հոմեոստատիկ կարգավորման և Ա. Մասլոուի ֆիզիկական ու անվտանգության պահանջումների հետ: Բայց մենք կարծում ենք, որ այս կապվածությունը ժառանգված չէ: Այս միտքը նշված է նաև Գիլթմանի և Վաների մոտ⁶: Ինչպես նրանք նշում են, «երեխաները սկսում են լեզու սովորել աշխարհը կարգայնացնելու, պատկերները մեկնաբանելու կարողությամբ զինված»: Այստեղ գործում է *ճանաչողական-ինտելեկտուալ շարժառիթը*:

Լեզվի յուրացման փուլերը: Համաձայն լեզվի յուրացմանը նվիրված ժամանակակից տեսությունների՝ յուրացումն իրենից ներկայացնում է լեզվի կանխատեսելի և հաջորդական փուլեր՝ նախալեզվային, գոգոցների, հոլոֆրասիկ, հեռագրային, հասուն :

Գլխում քննարկված հետազոտությունների տեսության արդյունքում կարող ենք ենթադրել, որ լեզու «ստեղծելու», «յուրացնելու», «օգտագործելու» համար մարդը պետք է զինված լինի որոշակի մտավոր և ֆիզիկական տվյալներով և կարողություններով, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ և ծածկագրվում ֆիլոգենետիկ տեղեկության ձևով: Ժամանակի ընթացքում օգտագործելով այս կարողությունները՝ մարդը իր գիտակցության մեջ «ստեղծում» է իրականության լեզվական կադապարը, որն իրենից ներկայացնում է պայմանական նշանների և օրինաչափությունների, իմաստների և նշանակությունների համակարգ:

Ամփոփելով և զուգահեռներ անցկացնելով լեզվի տեսությունների միջև՝ կարելի է անել հետևյալ ընդհանրական եզրակացությունները: Նախ՝ ճանաչողական զարգացումը նախապայման է լեզվական զարգացման համար: Այա՝ նմանակումն ու կրկնողությունը այն ճանաչողական գործառնություններն են, որոնք հանգեցնում են լեզվական գործողությունների ամրակայմանն ու որպես նշան-նշանակություն յուրացմանը: Նմանակման գործողությունների բազմակի կրկնությունը, լեզվական փորձի կուտակումն

⁵ Schumman J.H., The Neurobiology of Affect in Language, Language Learning University Club. University of Michigan, 1997:

⁶ Schumman J.H., The Neurobiology of Affect in Language, Language Learning University Club. University of Michigan, 1997:

էականորեն արագացնում են լեզվի յուրացումը: Երրորդ՝ լեզվական ունակությունը մարդուն տրված է գենետիկորեն, այսինքն՝ բոլոր երեխաները, անկախ բնական տվյալներից, գտնվելով լեզվական միջավայրում, ի վիճակի են վաղ հասակից յուրացնելու այն լեզվի բարդ քերականական կառույցները, որով շփվում են միջավայրի հետ:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ **ՆՄԱՆԱԿՈՒՄՆ ԻՐԵԿ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ** **ԿԱՐԳԱՅՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Նմանակումը լեզվական գիտակցության և լեզվի ծագման առաջնահերթ պայմաններից մեկն է, որի ընթացքը և արդյունքները կարելի է դիտարկել ինչպես լեզվի զարգացման պատմամշակութային զարգացման ընթացքում, այնպես էլ մասկան խոսքի յուրացման օնտոգենետիկ դիտարկումներում:

Նմանակման լեզվական դրսևորումները ֆիլոգենետիկ արտացոլված են բնածայնությունների, հնչյունասինվոլիզմների և ձայնարկությունների միջոցով, նաև հնդեվրոպական ծագման բառապաշարի այն շերտերում, որոնք համընդհանուր բնածայնական հիմք ունեն: Գ. Ջահուկյանը գրում է. «Հիմնական իմաստների սահմանափակության պայմաններում կարելի է տարբերել լեզուների ընդհանրությունների երկու տեսակ՝ ժառանգված և ձեռքբերված: Ժառանգված ընդհանրությունները կարող են պայմանավորված լինել կամ մարդկանց ընկալման և արտասանական ձևավորման որոշ ընդհանրություններով, կամ սկզբնական ընդհանրությամբ: Օգտագործելով եղած տեմինները որոշակի իմաստով՝ առաջին տիպի ընդհանրությունները կոչենք «տարրական ցեղակցության», երկրորդները՝ բուն ցեղակցության դրսևորումներ: «Տարրական ցեղակցության» երևույթներ են ձայնարկությունների, բնածայնությունների, մանկական բառերի այնպիսի ընդհանրությունները, որոնք կամ հանդիպում են ոչ ցեղակից լեզուների մեջ, կամ պատկանելով ցեղակից լեզուների՝ այնուամենայնիվ չեն կարող

որոշակի օրինաչափություններով հաստատված համարվել»⁷: Քիչ անց նա գրում է. «Ցավոք սրտի, նշված հայեցակետերով հնդեվրոպական լեզվի ուսումնասիրությունները բավարար չի կարելի համարել»⁸: Կարծում ենք, որ կարելի է միանգամայն համաձայն լինել այս տեսակետին անգամ քսանհինգ տարի անց: Ավելի քիչ է ուսումնասիրված նմանակման հոգելեզվաբանությունը օնտոգենեզում: Միայն մի քանի աշխատանքներ⁹ են հայտնի այս բնագավառից: Ի վերջո, կարիք կա հստակեցնելու նմանակման կարգաստեղծ նշանակությունը, այն գործառույթները, որոնք ապահովում են նմանակումը լեզվական գիտակցության զարգացման ընթացքում:

Նմանակումը` լեզվի ֆիզոգենետիկ ծագման նախապայման Հ. Փոլն ընդգծում է այն միտքը, որ ձայնային նմանակումները (բնաձայնությունները) կարող էին հիմք հանդիսանալ լեզվի ծագման համար¹⁰: Վ. Վունդը¹¹ քննադատում է Հ. Փոլի տեսակետը: Ոստ Վ. Վունդտի` «դրանք իրական գործընթացների և գործողությունների արդյունքում առաջացած ձայնի միջև ստեղծված զուգորդման երկրորդական արդյունքն են»: Այս «ձայնային ժեստերը» միայն ծագումնաբանորեն կարող են նմանվել բնաձայնություններին: Այսպիսի ծագում ունեն բնական պահանջներ և դրանց բավարարում արտահայտող բնաձայնական բառերի խմբերը` *յյամ-յյամ, բայ-բայ, հափ-չի, խը-փու, խը-փըսս (yum-yum, lulibye, sneeze, yawn)* և այլն: Առաջին հայացքից Վ. Վունդտը և Հ. Փոլը տարբեր տեսակետներ ունեն բնաձայնական բառերի ծագումնաբանության վերաբերյալ: Սակայն մեր կարծիքով, սրանք անհամատեղելի տեսակետներ չեն, այլ լրացնում են միմյանց` ստեղծելով մարդու ճանաչողության ծագման մասին լիարժեք պատկեր:

Հունբոլդտը բնաձայնությունները սահմանելու երեք չափանիշ է առաջարկում.¹² ա. այդ բառերը պետք է տարածված լինեն փոքր տարածքում, բ. այս բառերը բացակայում են լեզուների վաղնջական շրջանի

⁷ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՀ ՍՍՀ ԳԱ, 1987, էջ 48:

⁸ Նույն տեղում:

⁹ Dohmen, A. (2009). The Challenge of Devising Therapy for Children with Limited Communicative Competence, Patholink, 14, 10-14.

¹⁰ Paul H., Ursprung der Sprache Beilage Allgemeinen Zeitung Jahrg, 1907:

¹¹ Wundt W. M., Die Sprache (Language), Pt 1, 2., 1900:

¹² James W. Underhill, Humboldt, Worldview and Language, Edinburgh University Press, 2009. 176 pages

բառարաններում և հնագույն գրավոր հուշարձաններում, գ.առկա են դրանց հնչյունային տարբերակները: Վ. Սկալիչկան համաձայն չէ առաջին երկու չափանիշների հետ: Նա կարծում է, որ այս բառերի բացակայությունը վաղ գրավոր հուշարձաններում բնութագրում է հենց հուշարձանները և ոչ թե լեզուն¹³: Հետևաբար, վաղ հուշարձաններում չարձանագրված բառերը չի կարելի համարել համեմատաբար նոր բառեր:

Սկալիչկայի տեսության¹⁴ համաձայն` բնաձայնությունները պայմանավորված են չորս իմաստային բաղադրիչներով` հուզական, ակուստիկ, շարժողական, սոմատիկ: Այս բաղադրիչների միջև եղած փոխհարաբերությունները տարբեր են: Շատ դեպքերում ակուստիկ բաղադրիչի դերն առաջնային է: Այն նմանակում է ընկալված առարկայի ձայնային ֆիզիկական հատկանիշները: Կան բառեր, որոնք վերաբերում են նաև մարդու կողմից արտաբերված ձայններին: Այդուհանդերձ, Վ. Սկալիչկայի տեսակետները բերում են հետևյալ եզրահանգմանը: Մարդկային հուզական վերաբերմունքը բնության երևույթների նկատմամբ արտապատկերվել է նախամարդու գիտակցության մեջ և վարքում: Ուրեմն, նմանակումն ընկած է նախալեզվի բառապաշարի հիմքում, որն էլ բացատրում է լեզվական ազգակցության երևույթները:

Արդի բառարաններում բնաձայնական հատկանիշները ճանաչվում են հիմնականում միայն ձայնարկությունների օրինակներով: Սակայն անգամ այս դեպքերում էլ կան ձայնարկությունների հիման վրա առաջացած լիմաստ բառեր, որոնք կարիք ունեն առանձին ուսումնասիրության: Մենք չենք պնդում, թե բոլոր բառերն են ենթակա հնչյունասփմվողմի օրենքին: Մարդկային հասարակության բարդացմանը զուգընթաց, բնականաբար, բարդացել են լեզվաստեղծման գործընթացները, և բառապաշարի հասարակայնորեն զարգացած, մշակված կամ քաղաքակիրթ իմաստային-թեմատիկ խմբերում առավել դժվար կլինի գտնել, օրինակ, ձայնանմանակման հիմքով ստեղծված բառեր, քան այն թեմատիկ խմբերում, որոնք վերաբերում են ասենք, մարդկային ուժեղ հույզերի արտահայտմանը:

Արդեն ընդունված փաստ է, որ ուղեղում որոշակի հնչյուններ գուգորդվում են որոշակի զգացմունքների, զգացողությունների և տարբեր զգայարանների միջոցով ստացված պատկերների հետ (հոտ, համ և այլն),

¹³ Skalicka, V. Studie o mad'arskych vyrazech onomatopoeickych . Sbornik filologicky, 1935. русский перевод в книги парижский лингвистический кружок. М., 1967:

¹⁴ Նույն տեղում:

ուստի կինէպէտիկ կամ միջտիրոյթային կապերը նշանակութիւնների և իմաստների բազմազանութեան հիմք են հանդիսանում: Բնածայնությունները կարելի է ենթարկել որոշակի դասակարգման՝ ելնելով բառաքերականական զարգացումներում դրանց ընդգրկվածության աստիճանից: Պարզ ձայնարկությունները՝ հո-հո, ախ և այլն, ենթակա են նվազագույն բառաթեքման: Կան ձայնանմանակումներ, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում վերածվել են լիիմաստ բառերի և գրեթե ամբողջությամբ ենթակա են խոսքիմասային կարգայնացման՝ ունեն հոլովի, թվի և այլ քերականական կարգեր՝ կախված այն բանից, թե որ խոսքի մասի (*kiss-պաշ* /գոյական-բայ/ կամ մասերի *դմկոց-դմկալ- դմկան/*գոյական, բայ, ածական/) կիրառություն են ստացել: Չարգացման ավելի ուշ փուլում բնածայնական հիմքով բառերը զարգացրել են բառակազմական բներ, բառաքերականական տարբերակներ, և բացառված չէ, որ ձայնավորի տարբերակային փոփոխման շնորհիվ ծնունդ են տվել այլ՝ հարակից իմաստներ ունեցող բառերի՝ *ծուծ-ծծել-ծիծ*, *woe-whee-whip* և այլն:

Հնչիմաստային ընդհանրությունները անգլերենում դասակարգվում են ինը հնչույթային և ինը հնչյունակապակցական տիպերի: Քանի որ հայերենի ձայնավորական համակարգում երկարությունը տարբերակիչ հատկանիշ չէ, մենք տասնութ տիպերի փոխարեն նախընտրում ենք տալ բնածայնությունների՝ հայերենին ավելի հարմար և պարզ դասակարգում. ա. խուլ /թըմկի-, փընթ-, ֆըս-/, բ. ձայնեղ /զընգ-, բ-ժ/, գ. խառը /ճըլըթ/ և դրանցից բաղկացած՝ դ. կրկնավոր /դըդըդդ-, գըռըռըռ-/ բնածայնություններ: Ավելին, կարծում ենք, որ կարելի է զարգացնել այս ընդհանրացումները՝ բնածայնություններից զարգացած լիիմաստ բառերի ստուգաբանական վերականգնումով:

Նմանակումը՝ լեզվի օնտոգենետիկ յուրացման նախապայման Ընդհանրության տեսություններում նշվում է, որ նորածինը չի ընկալում իր և ուրիշի միջև գոյություն ունեցող նմանությունը: Բայց ժամանակակից փորձագիտությունը ցույց է տվել, որ երեխան հաջողությամբ նմանակում է մեծահասակների դենքի շարժումները ծնվելուց արդեն 42 րոպե անց:¹⁵ Պատճառն այն է, որ նմանակման հիմքում ընկած է ընկալման և

¹⁵ Meltzoff, A. N., & Moore, M. K. A new foundation for cognitive development in infancy: The birth of the representational infant. In E. K. Scholnick, K. Nelson, S. Gelman, & P. H. Miller (Eds.), *Conceptual development: Piaget's legacy* Mahwah, NJ: Erlbaum Press, 1999, pp. 53-78:

վերարտադրման մի ընդհանուր մեխանիզմ: Նյարդաֆիզիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե՛ գործողությունը կատարելիս և թե՛ այդ նույն գործողությանը հետևելիս ակտիվանում են կապիկի ուղեղի միևնույն հատվածները¹⁶:

Կաղ տարիքում նմանակմանը վերաբերող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նորածինները զգայուն են ինչպես իրենց սեփական, այնպես էլ ուրիշների շարժումների նկատմամբ: Նմանակման միջոցով երեխան տարբերակում է ոչ միայն մարդկանց, այլ նաև իրադրությունը:

Լ. Ռոբերթսը նշում է. «Որպեսզի երեխան սովորի խոսել, անհրաժեշտ է, որ լսողական, շոշափման և տեսողական համակարգերը գործեն միաժամանակ և կապակցված»¹⁷: Երեխան լսում է իրեն շրջապատող աշխարհի ձայները և սովորում է գղզղալ: Երբ նա գղզղում է, գրեթե միաժամանակ երեք գործողություն է կատարվում. նա լսում է իր սեփական ձայնը, զգում է իր լեզվի, շուրթերի հպումը և տեսնում է մոր կամ իրեն շրջապատող մարդկանց ռեակցիան իր արտաբերած հնչյուններին: Բոլոր երեք զգայական ընկալումներն էլ կարևոր են խոսել սովորելու համար: Մենք կավելացնեինք նաև չորրորդ տարրը. երեխան համեմատում է իր արտաբերած հնչյունները մոր կամ այլոց կողմից արտաբերված հնչյունների հետ և փորձում է նմանակել նրանց: Երեխան, ինչպես և նախամարդը, պետք է որոշակի հոգեկան լարման սահմանագիծ հաղթահարի, որպեսզի արտաբերի ազդակն արտացոլող իր «խոսքը»:

Խոսքի յուրացման և բառային ընդհանրացման գործընթացին զուգահեռ ձևավորվում և զարգանում է նաև մանկան գիտակցությունը: Գիտակցությունը (*objective consciousness*) կազմող միավորները ձեռք են բերվում վաղ մանկությունում՝ որպես շրջապատող աշխարհի հետ հուզական հաղորդակցման համար անհրաժեշտ դրդապատճառ հանդիսացող հույզեր, զգացողություններ, առարկաներ և նշանակություններ: Ավելի ուշ այս հույզերն ու առարկաները ենթարկվում են բառային ընդհանրացման և դառնում մտածողություն (*objective thinking*), որն էլ իր հերթին դրդապատճառ է հանդիսանում կամային, նպատակաուղղված գործողությունների համար¹⁸:

¹⁶ Rizzolatti G., Fadiga L., Gallese V., Fogassi L. Premotor cortex and the recognition of motor actions. *Cogn. Brain Res.*, 3 (1996), pp. 131-141.

¹⁷ Roberts L., *Central Brain Mechanisms in Speech*, University of Florida, 1966, p.121:

¹⁸Սույն տեղը:

Դ. Բրաունը¹⁹ տարբերակում է նմանակման 2 տիպ: Առաջին տիպը մակերեսային կառույցների նմանակումն է: Այս դեպքում անհատը նմանակում է հնչյունական կաղապարը, և նրա ուշադրության կենտրոնում բառի հնչյունական կազմն է: Լեզվի յուրացման ավելի ուշ փուլերում երեխայի գիտակցության մեջ արդեն բավականին ձևավորված են կարգային կառույցները: Նա արդեն գիտակցում է իմաստային մակարդակի կարևորությունը: Այս շրջանում նրանք նմանակում են լեզվի խորքային կառույցները:

Նոր բառի ստեղծումը խորքային կառույցների նմանակման արդյունք է, քանի որ երեխան նմանակել է մայրենի լեզվի բառակազմության օրենքները: Օնտոգենեզում նմանակմանն ուղեկցող կարևորագույն գործոններից է դրական ամրակայումը: Երեխան նմանակում է մեծահասակներին: Այն առարկությունները, թե երեխաները այնպիսի քերականական սխալներ են գործում, որոնք չէին կարող լսած լինել և նմանակել, կրկին խոսում են այն մասին, որ կառուցվածքային նմանակման շնորհիվ երեխան կազմում է առավել բարձր հաճախականությամբ կրկնվող մասնիկներով քերականական ձևեր, և հենց նմանակումն ու կրկնությունն են, որ նոր ճանաչողական կառույցների դեռևս չձևավորված լինելու պատճառով ստեղծում են համընդհանուր կանոնի նմանությամբ ձևեր:

Նմանակում և գիտակցության լեզվական կարգայնացում
Կարգայնացման հիմքում ընկած են երկու հիմնարար սկզբունք: Առաջինը վերաբերում է կարգային համակարգերի գործառնություններին: Ըստ այս սկզբունքի՝ կարգային համակարգերի նպատակն է ապահովել առավելագույն տեղեկություն նվազագույն ճանաչողական միջոցներով:

Երկրորդը վերաբերում է տեղեկության կառուցվածքին: Համաձայն այս սկզբունքի՝ ընկալվող աշխարհը դիտվում է որպես կանոնակարգված տեղեկություն, ոչ թե որպես անկառավարելի կամ անկանխատեսելի հատկանիշների ամբողջություն: Այսպիսով, առավելագույն տեղեկություն նվազագույն ճանաչողական միջոցներով ապահովելը հնարավոր է այն դեպքում, երբ կարգերն արտացոլում են ընկալվող աշխարհի հատկություններն ու կառուցվածքը հնարավորինս հստակ և ամբողջական կերպով: Մեր առաջադրած վարկածի համաձայն՝ իրականության լեզվական

¹⁹Brown D.H., Principles of Language Learning and Teaching, Englewood Cliffs, Prentice-Hall, 1987, p. 162

կաղապարումը կամ կարգայնացումը ընթանում է նախ՝ հոգեկան, ապա՝ մտածական գործողությունների որոշակի հաջորդականությամբ, որում առաջնային դերը նմանակմանն է: Նմանակման բնախոսական գործառնությամբ բնահարմարությունն է, այսպես կոչված՝ ադապտացիան, որի միջոցով օրգանիզմը ապահովում է շրջապատող միջավայրի հետ իր կենսական փոխհարաբերությունները: Այսպիսով, լեզվի առաջացման հիմքում ընկած է ծայնամանակման բնահարմարողական գործողությունը:

Նմանակման այն գործողությունը, որը զգայական ընկալումների արդյունքում գնահատվում է մի կողմից՝ որպես օրգանիզմի ինքնաթափման, իսկ մյուս կողմից՝ հաղորդակցական նպատակների իրականացման հաջողված դեպք, համարվում է բնահարմարման կայացած օրինակ և կրկնվելու մեծ հավանականություն է ստանում: Նմանակումը ամրակայվելով, կարգայնացվելով և ընդհանրացվելով ծնունդ է տալիս ավելի բարդ ճանաչողական գործընթացների:

Է. Ռոշը, ելնելով կարգայնացմանը նվիրված իր փորձառական հետազոտություններից, առաջ է քաշում այն վարկածը, որ դասակարգ-գելու որոշ կերպեր ճանաչողական առումով շատ արդյունավետ են²⁰: Նա պնդում է, որ տարբեր մակարդակներում գտնվող կարգերից յուրաքանչյուրը կազմվում է իրեն բնորոշ եղանակով: Ըստ Է. Ռոշի՝ նախատիպերը կարգերի այն անդամներն են, որոնք ամենահստակն են արտացոլում կարգային կառույցը, և տաքսոնոմիան մի համակարգ է, որի կարգային կառույցները շաղկապված են մեկը մյուսի հետ դասակարգերի ներառման սկզբունքով: Լեզվի յուրացման վաղ շրջանում նմանակումն առավել մեծ կարգաստեղծ գործառնություն ունի:

Կարգայնացումը դիտարկվում է իբրև յուրացում, ընտրողական ուշադրության արդյունք, հիշողության, կամային վերահսկողության արդյունք, տեսակետի ստեղծում, մտահայեցողության եզրահանգում: Կարգաստեղծման գործընթացի կայացումն ամբողջացնելու նպատակով նշված աշխատությունների ընդհանրացման փորձը թույլ է տալիս եզրակացնել, որ կարգաստեղծումն սկսվում է այն պահին, երբ երեխան սովորում է կառավարել իր շարժումները, գործողությունները:

²⁰Rosch E.H. (with Lloyd, B., eds), Cognition and Categorization. Hillsdale NJ, Lawrence Erlbaum Associates, 1978, p. 466:

Կարգայնացման առաջնայինս փուլն անհնար է առանց առարկայական և ձայնային իմաստների միջև նմանության և կապի վարքային հիմնավորման:

Այսպիսով, կարգայնացումը՝ իբրև լեզվաձանաչողական համակարգ, իրականանում է երկու փուլով: Առաջին փուլում զարգանում են իրարից անկախ երկու գործընթացներ՝ դիմաձայնային զգայաշարժողական նմանակում և առարկայական աշխարհի զգայաշարժողական արտապատկերում: Երկրորդ փուլում կայանում են առանձին-առանձին ձևավորված այս երկու համակարգերի զուգորդումները, որոնց արդյունքում ձևավորվում է լեզուն՝ որպես նշանային համակարգ:

Այսպիսով, մեր դիտարկումները և տեսական վերլուծությունները հնարավարություն են տալիս հանգելու այն եզրակացությանը, որ նմանակումը կարգաստեղծման վաղ փուլում խաղում է երկակի դեր: Այն հանդես է գալիս գիտակցության առարկայական զգայաշարժողական արտապատկերումների և կառույցների զարգացման մեջ մի կողմից և ձայնային զգայաշարժողական արտապատկերումների՝ լեզվական կառույցների զարգացման մեջ՝ մյուս կողմից: Այս երկու կառույցների նշանային կապի հաստատման ժամանակ գործում է համաբանության սկզբունքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լեզվի ծագման և զարգացման մեզ հայտնի մոտ քառասուն տեսությունները կարելի է խմբավորել ըստ դրանց գլխավոր հարցադրման և նպատակի, և ներկայացնել 3 հիմնական ուղղություններով. լեզուն՝ իբրև վարքագիծ, լեզուն՝ իբրև ձանաչողություն/կաղապարում, և լեզուն՝ իբրև ստեղծագործություն:

2. Լեզվի ծագման և զարգացման տեսությունները պետք է հաշվի առնեն բնական ընտրության երեք տարբեր նպատակաբանական և ժամանակային կտրվածքներ՝ ֆիլոգենետիկ, օնտոգենետիկ և մշակութային ընտրություն:

3. Նմանակման՝ իբրև ձանաչողական գործառնայթի երեք տարբեր չափումներում իրականանալու առանձնահատկությունները հետևյալն են. ֆիլոգենետիկ նմանակումը բնության ձայների ուղղակի, ինքնաբերական արտացոլումն է մարդու ձայնարանի միջոցով / օնոմատոպներ և

ձայնարկություններ/: Օնտոգենետիկ նմանակումը անհատից անհատ փոխանցվող գիտելիք-գործողությունն է, որի տարբերակվածությունը կախված է նմանակողի ֆիզիկական հնարավորություններից: Մշակութային նմանակման արդյունք է հանրորեն ընդունված վարքագծի փոխանցումը:

4. Հնչյունանմանակումը լեզվում տվել է երկու կարգի դրսևորումներ՝ բնաձայնական բառեր և հնչիմաստային տարրեր պարունակող բառերը: Եթե բնաձայնություններն ակնհայտորեն արտացոլում են առարկայական աշխարհի ձայները, ապա հնչիմաստային տարրեր պարունակող բառերում ձայնանմանակումը և դրա բառային արդյունքները պայմանավորված են ֆիլոգենետիկ և մշակութային ընտրությամբ: Հետևաբար, բնաձայնությունները ենթակա են համաժամանակյա միջլեզվական քննության, իսկ հնչիմաստային ծագում ունեցող բառերը ենթակա են ստուգաբանման:

5. Նմանակումն իբրև ուսումնասիրության ելակետ ընդունելը թույլ է տալիս նորովի անդրադառնալ լեզվի ծագման և յուրացման հարցերին: Ֆիլոգենետիկ տեսանկյունից այն հիմք է լեզվի ծագումը բնության և զգացմունքների առաջացրած ձայների ընդօրինակումով բացատրելու համար: Օնտոգենետիկ տեսանկյունից այն բացատրում է երեխայի լեզվախոսքային սոցիալականացման օրինաչափությունները:

6. Նմանակումն ուսումնասիրության առարկա դարձնելու շնորհիվ բացահայտվում է, որ թե՛ բնաձայնությունները և թե՛ բառային ստուգաբանությունները մարդկային բնության ընդհանրություններով և բնակլիմայական ու մշակութային տարբերություններով են պայմանավորված:

7. ձանաչողական կառույցները, ըստ Պիաժեի ընդհանրական ներկայացման, մտավոր կամ ֆիզիկական գործունեության կաղապարներ են, որոնք վերաբերում են մարդու մտավոր գործունեության այս կամ այն հատվածին և համապատասխանում են երեխայի զարգացման փուլերին: Այդ կաղապարների էության և բնույթի մասին, սակայն, Պիաժեն ոչինչ չի ասում, մինչդեռ ակնհայտ է, որ գոյություն ունեն համամարդկային ձանաչողական գործողություններ, և այդպիսի գործողություններից առաջինը, որ առկա է նաև ֆիզիկական իրականության մեջ իբրև արտացոլման պարզագույն հարաբերություն, նմանակումն է:

8. Նմանակումն ու կրկնողությունները ճանաչողական այն գործողություններն են, որոնք հանգեցնում են լեզվական գործողությունների ամրակայմանն ու որպես նշան-նշանակություն յուրացմանը: Բնածայնությունները և ընդհանուր ստուգաբանական հիմքով բառերը ինքնուրույն ձայնանմանակումներ են, որոնց մեջ համընդհանուրը ձայնեղ բաղաձայնական նմանակումն է, իսկ տարբերակվածը՝ լեզվի համակարգում խոսքիմասային գործառույթի, կառուցվածքի և կապերի ձեռքբերումը:

9. Օնտոգենեզում նմանակման երկու տեսակ կա՝ մակերեսային՝ ձևական կառույցների, և խորքային՝ իմաստագործառական կառույցների նմանակում: Լեզվի յուրացման առաջնային փուլում երեխան նմանակում է մակերեսային կառույցները, քանի որ դեռևս նրա գիտակցության մեջ բավարար ձևավորված չեն իմաստային կարգերը հնչյունական կաղապարներին իմաստ վերագրելու համար: Լեզվի յուրացման ավելի ուշ փուլերում երեխայի գիտակցության մեջ արդեն բավականին ձևավորված են կարգային կառույցները: Այս շրջանում նրանք մեծ ուշադրություն են դարձնում լեզվի իմաստակիր տարրերին, լեզվի խորքային կառույցներին: Այլ կերպ ասած՝ նրանք նմանակում են լեզվի խորքային կառույցները:

10. Նմանակումը՝ որպես ճանաչողական գործընթաց, ընկած է լեզվի յուրացման հիմքում: Բացի դրանից՝ լեզվի յուրացման վաղ փուլերում նմանակման սկզբունքով ստեղծված բառերը՝ բնածայնությունները, կազմում են երեխայի «բառապաշարի» մեծ մասը: Այս բառերի յուրացման ժամանակ երեխան ձեռք է բերում իրականության հնչյունական կաղապարման իր լեզվամշակույթում ընդունված համակարգի գաղափարը:

11. Նմանակմանն ուղեկցող կարևորագույն գործոններից է դրական ամրակայումը՝ օնտոգենեզում խրախուսման, և ֆիլոգենեզում արդյունավետ փորձի կրկնության միջոցով:

12. Թե՛ ֆիլոգենեզում և թե՛ օնտոգենեզում նմանակումը ստեղծում է մարդու/երեխայի նախնական և հիմնական բառապաշարի հիմքը, որը թույլ է տալիս պնդել, որ այն հոգեկան գործողություն է՝ ուղղված իրականության լեզվական ճանաչողությանը և կաղապարմանը:

13. Վերը բերված բոլոր եզրահանգումները հիմնավորում են մեր առաջադրած վարկածն այն մասին, որ նմանակումը մարդու օնտո - և ֆիլոգենետիկ ճանաչողական գործողություններից առաջինն ու նախնականն

է, որի հիման վրա կառուցվում և զարգանում է մարդու նշանային գործունեությունն ու ճանաչողությունը:

14. Նմանակման բնախոսական գործառույթը բնահարմարությունն է, այսպես կոչված՝ ադապտացիան, որի միջոցով օրգանիզմը ապահովում է իր կենսական փոխհարաբերությունները շրջապատող միջավայրի հետ: Պարզագույն ակտիվ ադապտացիան ենթադրում է օրգանիզմի որոշակի հաղորդակցական գործունեություն նմանակման միջոցով՝ տեղեկության հավաքում, որի արդյունքում օրգանիզմը զարգացնում է որոշակի հատկություններ և գործառույթներ, որոնք նպաստում են բնահարմարման իրականացմանը:

15. Նմանակումը, ամրակայվելով հիշողության միջոցով, կարգայնացվելով և ընդհանրացվելով, ծնունդ է տալիս ավելի բարդ ճանաչողական գործընթացների՝ զուգորդման և փոխաբերման:

16. Նմանակումը կարգաստեղծման վաղ փուլում ունի երկակի նշանակություն: Այն հանդես է գալիս գիտակցության առարկայական զգայաշարժողական արտապատկերումների և կառույցների զարգացման մեջ մի կողմից և ձայնային զգայաշարժողական արտապատկերումների՝ լեզվական կառույցների զարգացման մեջ մյուս կողմից: Այս երկու կառույցների նշանագիտական կապի հաստատման ժամանակ գործում է համաբանության սկզբունքը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Բնածայնություններ. իրականության լեզվական կաղապարման փուլերից մեկը: ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆ.-տի տասնամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի թեզիսներ: Երևան, 2001, էջ 297-299 :

2. Imitation and Motivation in the Process of Mastering a Language. Ռոմանագերմանական բանասիրությանը և օտար լեզուների դասավանդմանը նվիրված առաջին միջազգային գիտաժողովի թեզիսներ: Երևան, 2002թ., էջ 33-34

3. H. Tamrazyan, G. Hovhannisyan. Imitation -The Initial Stage of Linguistic Modeling of Reality. VIII International Cognitive Linguistics Conference. Logrono (La rioja) 2003, էջ 56:

4.Նմանակումը և դրդապատճառները լեզվի նմանակման առաջնային փուլում: Մխիթար Գոշ գիտամեթոդական հանդես 3(15) Երևան, 2007թ., էջ 131-137

5.Լեզվի յուրացման տեսությունները: Լեզու և լեզվաբանություն: 1-2 Երևան, 2007թ., էջ 59-67

Тамразян Амест Сержиковна

Имитация – начальная стадия языкового моделирования действительности

**Диссертация на соискание учений степени кандидата
филологических наук по специальности 10.02.02. "Общее и
прикладное языкознание"**

**Защита диссертации состоится на заседании
Специализированного совета Лингвистики 019 ВАК Республики
Армения, действующего в Институте языка имени Г. Ачаряна НАН
РА, 17 декабря 2012г. в 15:00, по адресу г. Ереван, 0015, ул.
Г.Лусаворича 15**

Ծագրիւմ

Цель диссертации – психолингвистическое изучение имитации как начального этапа и базовой функции познания и развития языковой способности. Выдвинута гипотеза о том, что имитация как начальная форма познавательной деятельности находит свое отражение как в филогенезе, так и в онтогенезе речи и может быть исследована соответственно, на материале этимологии ономастических и звуко-символических с одной стороны, и раннего развития детской речи – с другой. В диссертации проведен обзор трудов таких лингвистов как В. Скаличка, А. Катания, Ж. Пиаже, Л. Выготский,

Бикертон, Н. Хомский, С. Пинкер, Б.Бичакчян и других лингвистов, психологов, психолонгвистов.

Актуальность работы определяется возрастающим интересом к механизмам и закономерностям языкового познания, в частности к имитации на разных уровнях освоения языка – как первого, так и второго. Работа состоит из двух глав, введения и заключения.

Исследование иллюстрируется более сотней примерами детской речи, которые автор собирала в результате собственных длительных наблюдений детей в возрасте от 12 до 48 месяцев.

Первая глава посвящена анализу различных подходов и теорий языка, проведению параллелей между характеристикам эволюционного развития языковой способности и овладением речи ребенком. Рассматриваются фазы и уровни развития языковой способности, мотивы развития речи в онтогенезе и филогенезе.

В первой главе также представлен обширный анализ теорий и гипотез возникновения человеческой речи с целью определения основных мотиваторов появления ее как новой психомоторной формы деятельности. Имитация рассматривается как функциональное ядро для онтогенетического, филогенетического и культурного отбора и трансляции навыков речи.

Во второй главе рассматривается феномен имитации в планах онтогенеза и филогенеза категоризации языкового сознания. В филогенезе на примерах звуко-символических в различных языках выявляются общие закономерности звуковой имитации на разных этапах категоризации.

В онтогенезе рассматривается применение имитации как познавательной функции и речестроения на пути категоризации ребенком, а также приводятся примеры имитативного речетворчества на разных уровнях овладения языком – на фонетическом, морфологическом, семантическом и даже на словообразовательном уровне.

Имитация в плане культурного отбора рассматривается посредством анализа 18 фонологических классов английских ономастических и на этой основе рассматриваются ономастические армянского языка, а также, возможность их классификации с учетом особенностей фонологической системы армянского языка.

В заключении сделаны выводы по обоснованию выдвинутой гипотезы. Имитация является базовой познавательной функцией человека и играет

огромную роль в возникновении человеческого языка и формировании детской речи. Имитация проявляется как в элементарном звукоподражании, так и на более сложных уровнях речи и является основой для более сложных познавательных и речевых операций. На основе имитации развиваются другие, также более сложные формы как языкового, так и неязыкового познания.

Tamrazyan Hamest

Imitation - the Initial Stage of Linguistic Modelling of Reality

Dissertation for the degree of Candidate of Philological Sciences for speciality 10.02.02 – “General and Applied Linguistics”

**The Defense of the Dissertation will take place on December 17th, 2012, at 15:00, at the session of Specialized Council of Linguistics 019 of Language Institute after H. Acharyan of NAS of RA
Address: G. Lusavorich 15, 0015 Yerevan, Armenia**

Abstract

The goal of this research paper is the psycholinguistic study of imitation as the initial stage of verbal cognition and linguistic categorization.

The research hypothesis is that imitative processes lie in the basis of human cognition and language origin from the phylogenetic point of view and it is as well the initial stage of language acquisition in infants from the ontogenetic aspect of study. This principle of isomorphic function of imitation in the process of linguistic categorization is illustrated with examples of onomatopoeic words from different languages – Armenian, English and Russian. The etymological analysis of language specific onomatopoeic words is carried out and documented samples of infants' speech of age 12-48 months are analyzed from a psycholinguistic perspective. Imitative action at different levels of linguistic categorization – phonology, morphology, grammar and word formation - is also exemplified in the

dissertation. On the other hand the process of imitation is observed in three different aspects of human development as ontogenetic, phylogenetic and cultural forms of selection and evolution.

The dissertation is structured according to the research tasks set forward: an introduction, two chapters and a conclusion.

The first chapter comprises an analysis of all significant theories of language origin and language acquisition. Research of Ajuragera, Catania, Piaget, Brown, Vigotski, Chomsky, Pinker, Bichakjian, Jespersen, Skalichka and other distinguished linguists is analyzed from a new perspective, according to which language acquisition is strongly conveyed by the emergence of imitation as a form of motor reflection and then a cognitive activity. An extensive theoretical analysis of previous research in this chapter is focused on the explication of core motivators of the emergence of speech as another form of human activity.

The second chapter discusses imitation in its two representations and is followed by a study of imitative language phenomena in various languages – noise words, onomatopoeia, sound symbolisms et c. Imitation can be observed in both ontogenetic and phylogenetic aspects of language acquisition, as well as in cross cultural comparison. The evidence of this is the development of language specific sound combinations of English onomatops, which were classified into more than a dozen classes. Phonetic and phonological peculiarities of these units are discussed and a classification of Armenian onomatops is suggested according to the rules of the Armenian phonological system as compared with the one suggested for English.

Aside from the above mentioned, imitation is studied in the early verbal behavior of monolingual and bilingual infants. Linguistic data analysis leading to inferences supporting the proposed hypothesis are presented in the paper. Imitation is also proved to be an essential factor on all levels of linguistic categorization.

The conclusions drawn in the final part of the dissertation summarize the exploration of imitation in its twofold representation: as a basic cognitive operation with the world of objects and a means of elementary form of vocal/verbal communication and as a basis for semiotic abstraction of the sounds of the world into objects of linguistic signs. Accordingly, imitation serves a basis for more complicated operations in linguistic categorization.